



Crowe Armenia

ՔրուԼ Արմենիա Հայտարարգրման կարգը 2024

Ներածություն

Ո՞վքեր պետք է ներկայացնեն հայտարարագիր	3
Ի՞նչն է ենթակա հայտարարագրման	4
Ինչպե՞ս հայտարարագրել	5
Ի՞նչ է անհրաժեշտ եկամուտների հայտարարագիր ներկայացնելու համար	5
Ի՞նչ պատասխանատվություն է առաջանում չհայտարարագրելու դեպքում	6
Մի փոքր լրացուցիչ տեղեկատվություն	7

Ո՞վքեր պետք է ներկայացնեն հայտարարագիր

2023 թվականից Հայաստանում սկսվել է հանրապետության բոլոր ռեզիդենտ քաղաքացիների եկամուտների համընդհանուր հայտարարագրման համակարգի ներդրումը: Գործընթացը կազմակերպվելու է երեք փուլով, որից առաջինը նախատեսված է 2023 թվականի եկամուտների հայտարարագրման համար: ՀՀ Հարկային օրենսգրքի 156-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն առաջին փուլում հայտարարագիր պետք է ներկայացնեն

1. 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ պետական և համայնքային ծառայողները, հանրային պաշտոններ զբաղեցնողները,
2. 2022թ. արդյունքներով 1 մլրդ դրամ և ավելի համախառն եկամուտ հայտարարագրած ՀՀ ռեզիդենտ առևտրային կազմակերպությունների՝ 2023-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ մասնակիցները, բաժնետերերը, փայատերերը կամ անդամները,
3. 2023թ. ընթացքում 20 մլն դրամ և ավելի փոխառությունն ստացածները,
4. «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքով իրական շահառու համարվողները, այսինքն այն անձիք, ովքեր
 - ուղղակի կամ անուղղակի տիրապետում են իրավաբանական անձի՝ ձայնի իրավունք տվող բաժնեմասերի (բաժնետոմսերի, փայերի) 20 և ավելի տոկոսին կամ ուղղակի կամ անուղղակի կերպով ունեն 20 և ավելի տոկոս մասնակցություն իրավաբանական անձի կանոնադրական կապիտալում,
 - իրավաբանական անձի նկատմամբ իրականացնում է իրական (փաստացի) վերահսկողություն այլ միջոցներով,
 - հանդիսանում են իրավաբանական անձի գործունեության ընդհանուր կամ ընթացիկ ղեկավարումն իրականացնող պաշտոնատար անձ այն դեպքում, երբ առկա չէ նախորդ կետերի պահանջներին համապատասխանող ֆիզիկական անձ:

Ի՞նչն է ենթակա հայտարարագրման

Հայտարարագրման ենթակա են 2023 թվականին անձի կողմից ստացված բոլոր եկամուտները, անկախ դրանց հարկվող լինելուց, օրինակ՝ փոխառության ստացում, վարկ, ժառանգություն, նվիրատվություն, ավանդի տոկոս, բաժնետոմսերից ստացված շահույթ և այլն:

Հայտարարագիրը չի ներառում մինչև 2023 թվականը ստացված եկամուտը կամ առկա գույքը/գումարը: Այս փուլում հայտարարագրման ենթակա չեն նաև 2023 թվականի ընթացքում 20 մլն դրամ և ավելի չափով ստացված վարկերը:

Ինչպե՞ս հայտարարագրել

Հայտարարագիր ներկայացվում է self-portal.taxservice.am կայքի միջոցով՝ «Ֆիզիկական անձանց էլեկտրոնային հաշվետվությունների ներկայացման համակարգ»-ի հայտարարագրման բաժնից: ՀՀ Պետական եկամուտների կոմիտեին հայտնի որոշակի տեղեկատվություն արդեն իսկ լրացված է լինելու և անհրաժեշտ է միայն ավելացնել մնացածը:

Ի՞նչ է անհրաժեշտ եկամուտների հայտարարագրի ներկայացնելու համար

Հայտարարագիր ներկայացնելու համար անհրաժեշտ է ունենալ խիստ էլեկտրոնային նույնականացում, իսկ փոփոխություններ անելու և հաստատելու համար՝ նաև էլեկտրոնային ստորագրություն: Այժմ գործում է խիստ էլեկտրոնային նույնականացման և էլեկտրոնային ստորագրության երկու տարբերակ՝

- Բջջային հեռախոսի միջոցով,
- Էլեկտրոնային կրիչ պարունակող նույնականացման քարտով:

Ի՞նչ պատասխանատվություն է առաջանում չհայտարարագրելու դեպքում

Եկամուտները չհայտարարագրելն առաջին անգամ առաջացնում է նախազգուշացում, իսկ նախազգուշացումից հետո 30 օրվա ընթացքում հայտարարագիր չներկայացնելն արդեն տուգանք՝ 5000-50000 դրամի չափով՝ կախված հայտարարագրող սուբյեկտից: Իսկ տուգանքի նշանակումից հետո 30-օրյա ժամկետում հայտարարագիրը կրկին չներկայացնելու դեպքում տուգանքի չափը կրկնապատկվում է:

Մի փոքր լրացուցիչ տեղեկատվություն

- ✚ Հայտարարագիր ներկայացնող ֆիզիկական անձինք ունեն եկամտային հարկի գումարից կրթության և առողջապահության ոլորտում սոցիալական ծախսի փոխհատուցման իրավունք: Հայտարարագիր ներկայացնող անձը կարող է օգտվել փոխհատուցումից ինչպես իր, այնպես էլ ընտանիքի անդամների հետ կապված սոցիալական ծախսերի համար:
- ✚ Պետական եկամուտների կոմիտեն, հաշվի առնելով, որ 2023թ.-ի համար հաշվարկ-հայտարարագիր ներկայացնող անձանց մի մասը դեռ չի կարողացել անցնել անձի խիստ նույնականացում, ինչպես նաև ՀՀ ՆԳՆ միգրացիայի և քաղաքացիության ծառայությանում նույնականացման քարտ ստանալու համար առկա են մեծաքանակ հերթեր, 2023թ.-ի համար հաշվարկ-հայտարարագիր ներկայացնելու վերջնաժամկետը հետաձգել է մինչև *սույն թվականի հուլիսի 22-ը*:

ԿՈՆՏԱԿՏՆԵՐ

Ալբերտ Ասատրյան

Տնօրեն-Բաժնետեր

Քրոու Արմենիա

albert.asatryan@crowe.am

Մարիետա Գևորգյան

Իրավաբան

Քրոու Արմենիա

marieta.gevorgyan@crowe.am

«Քրոու Արմենիա»-ն պատրաստ է ֆիզիկական անձանց աջակցել իրենց եկամուտների հայտարագրման ցանկացած փուլում:

Ընկերությունում աշխատում են բարձր որակավորում ունեցող մասնագետներ, որոնք ունեն խորը մասնագիտական գիտելիքներ աուդիտորական, հարկային և խորհրդատվական ոլորտներում:

«Քրոու Արմենիա»-ն հանդիսանում է Crowe Global հաշվապահական ընկերությունների ցանցի լիիրավ անդամ: Crowe Global- ը մասնագիտական ծառայություններ է մատուցում 130 երկրներում: Այն աշխարհում հաշվապահական ընկերությունների 8-րդ խոշորագույն ցանցն է: Crowe Global- ը բաղկացած է 220 ֆիրմաներից՝ ավելի քան 42,000 աշխատակիցներով: